Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2018 թվականի տարեկան հաշվետվություն

- **Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ**

  Հաշվետու ժամանակաշրջանում այս բնագավառում համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել են համայնքի շահերը բոլոր կարգի հարաբերություններում: Հատկացվել է 552 տեղեկանք, 2 բնակիչների հատկացվել է բնութագիր, քաղաքացիների կողմից ներկայացված թվով 60 դիմումների ընթացք է տրվել: Քաղաքացիների կողմից բողոքները ընդունվել է ի գիտություն և առաջադրված խնդիրներին ժամանակին լուծվել է:

  Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 75 որոշում և արձակվել 19 կարգադրություն :

  Մարզի ֆեդերալ կառույցների ղեկավարներին է ուղարկվել 240 պաշտոնական գրություն:

  2018 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 3 արտահերթ և 6 հերթական նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի խիստ հրատապ հարցերի քննարկման՝ մասնավորապես կատարվել է բյուջեի փոփոխություններ և ազատ միջոցների բաշխում:

- **Պաշտպանության բնագավառ**

  Համայնքի ղեկավարի կողմից աջակցություն է ցուցաբերվել քաղպաշտպանության մարմինների գործունեությանը:

- **Գյուղատնտեսության բնագավառ**

  Համայնքապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին հողօգտագործման աշխատանքներում: Համայնքում առկա հողատարածքներն ունեն հետևյալ բաշխումը.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 525.20 հա
- բնակավայրային նշանակության հողեր՝ 142.43 հա
- վարելահողեր՝ 372.30 հա
- խաղողի այգիներ՝ 5.3 հա
- պտղատու այգիներ՝ 0.36 հա

2018 թվականի ընթացքում արտադրվել է և հանրապետության շուկաներ են հանվել 9295 տոննա բանջարեղեն, 2418 տոննա ձմերուկ,800 տոննա կարտոֆիլ, 340 տոննա հացահատիկ և շուրջ 102 տոննա խաղող:

Աշնանը համայնքում կատարվել է 48 հա աշնանացան հացահատիկի ցանքս :

Անասունների գլխաքանակը 01.01.2019 թվականի դրությամբ կազմում է՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 169 գլուխ, որից՝ կովեր՝ 52 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 30 գլուխ, որից մայրականը՝ 30 գլուխ, խոզերի գլխաքանակը կազմել է 385 գլուխ, որից մայրական կազմը՝ 80, մեղվաընտանիքներ՝ թվով 18:

- **Քաղաքաշինության բնագավառ**

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել համայնքում բնակարանաշինության ոլորտում:

2018 թվականի ընթացքում տրվել է 3 շինարարության թույլտվություն: Վերանորոգվել է մայրուղու երկարությամբ ձգվող փողոցային լուսավորությունը, որի համար ծախսվել է 408.7 հազ. դրամ գումար:

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան: Այդ աշխատանքների համար 2018 թվականի ընթացքում հատկացվել է 1560.0 հազ. դրամ գումար: Աշխատանքները կատարվում են շաբաթական մեկ անգամ: Աղբը տեղափոխվում է այդ նպատակի համար հատկացված վայրում:

Համայնքում գործում է դիակառքի ծառայություն, որի համար տարեկան հատկացվում է 148.0 հազ. դրամ գումար: Հանգուցյալների հիշատակին նվիրված ծաղկեպսակներ ձեռք բերելու համար հատկացվել է 490.0 հազ. դրամ գումար:

- **Հողօգտագործման բնագավառ**

2018 թվականի ընթացքում կազմվել է ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը և հանձնվել մարզպետարան:

Կատարվել են հողերի չափագրման աշխատանքներ:

- **Առևտրի և ծառայությունների բնագավառ**

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հսկողություն է իրականացվել առևտրի ծառայությունների ոլորտում:

- **Տրանսպորտի**

Կատարվել են դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ, որոնց համար տրամադրվել է 250.0 հազ. դրամ գումար: Համայնքի կենտրոնական ճանապարհի կապիտալ վերանորոգման նպատակով հատկացվել է 990.0 հազ. դրամ գումար:

- **Միջոցառումներ**

- Կազմակերպվել է Մարտի 8-ի ՝ կանանց միջազգային տոնին, նվիրված միջոցառում , մասնակցել են համայնքապետարանի, մշակույթի տան , դպրոցի և մանկապարտեզի աշխատակից կանայք և հանձնվել են նվերներ:

- 2015թվականից ի վեր , ինչ տեղադրվել է եղեռնի զոհերի 100 ամյակին նվիրված հուշարձանը , ամեն տարի կազմակերպվում է միջոցառում և դրվում է ծաղկեպսակ:

- Հաղթանակի տոնին ՝ մայիսի 9-ին , ծաղկեպսակ է դրվել հուշակոթողի առջև և կազմակերպվել է հյուրասիրություն , որին մասնակցել են համայնքի բնակիչներ , ավագանու անդամներ , համայնքապետարանի և մշակույթի տան աշխատակիցներ , երկրապահի անդամներ:

- Համայնքում բարձր է գնահատվում մանկավարժների անձնվեր աշխատանքը , մանկավարժների տոնին նվիրված կազմակերպվել է միջոցառում՝ դպրոցի և մանկապարտեզի աշխատակիցների մասնակցությամբ , որի ժամանակ տեղի է ունեցել հյուրասիրություն:

- Մանկապարտեզի տնօրենի համար կազմակերպվել է հրաժեշտի միջոցառում –հյուրասիրություն , մանկապարտեզի և համայնքապետարանի աշխատակիցների մասնակցությամբ:

- **Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ**

Համայնքապետարանը մեծ ուշադրություն է դարձնում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը՝ միաժամանակ ցուցաբերելով իր աջակցությունը բոլոր հարցերում՝ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության զարգացման մակարդակն ավելի ամուր հիմքերի վրա պահելու մտայնությամբ:

Համայնքում գործում է մեկ դպրոց , որտեղ սովորում է 333 աշակերտ և մեկ մանկապարտեզ՝ 70 երեխայի հաճախումով և 15 աշխատակցով:
Մանկապարտեզի ավագ և միջին սաներին տարեվերջյան հանդեսին նվիրված միջոցառման համար նվերներ գնելու նպատակով հատկացվել է 200.0 հազ. դրամ գումար, իսկ աշնան հանդեսի կապակցությամբ նվերներ գնելու համար տրամադրվել է 30.0 հազ. դրամ գումար, 70.0 հազ. դրամ գումար տրամադրվել է մանկապարտեզի տնօրենին հրաժեշտի միջոցառում կազմակերպելու համար :

Դպրոցի ավարտական դասարանի սաներին նվերներ գնելու համար հատկացվելէ 110.0 հազ. դրամ գումար:

Համայնքի բնակիչների հանգիստն ու ժամանցը կազմակերպելու նպատակով 70.0 հազ. դրամ գումար է հատկացվել մշակույթի տան համար բիլիարդի պարագաներ, շախմատներ և շաշկիներ ձեռք բերելու համար: Մշակույթի տանը տեղադրվել են 2 դռներ՝ 200.0 հազ. դրամ , ձեռք են բերվել էլեկտրական ջեռոցներ, վերանորոգվել է տանիքը և էլեկտրական համակարգը:

- **Սոցիալական բնագավառ**

Համայնքապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել նպաստառուները և կենսաթոշակառուները:

Հաշվետու ժամանակաշրջանում 2240.0 հազ. դրամ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել , այդ թվում՝

1. հիվանդ և սոցիալապես անապահով 31 ընտանիքների տրամադրվել է 1380.0 հազ. դրամ գումար,
2. նորածին երեխաներ ունեցող 28 ընտանիքների հատկացվել է 840.0 հազ. դրամ
3. «էջմիածնի ավտոդպրոց» ՍՊԸ սովորող 1 երեխաների ՝ 20.0 հազ. հազար դրամ

- **Ազգաբնակչություն**

Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2968 մարդ: 2018 թվականի ընթացքում ծնվել է 28, մահացել է 21 մարդ:
Ընտանեկան նպաստ ստացողների թիվը կազմում է 40 մարդ , թոշակառուները՝ 220 մարդ:

Ֆինանսների բնագավառ

- **Հողի հարկ և գույքահարկ**

2018 թվականի ընթացքում համայնքի հողօգտագործողներից գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 85586.4 հազ. դրամ հողի հարկ , որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 93.5% :

2018 թվականի ընթացքում գույքահարկի գծով բյուջեի եկամուտների մասով գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել փոխադրամիջոցների գույքահարկ՝ 6260.4 հազ. դրամ գումար (101.0%), շինությունների գույքահարկ՝ 298.2 հազ.դրամ գումար(117.8%):

Վարձակալական հողերի վարձը 2018 թվականի ընթացքում կազմել է 1363.7 (181.8%) հազ. դրամ գումար, գույքի վարձակալություն՝ 183.8 հազ. դրամ (102.1) իսկ տեղական տուրքերը՝ 278.4 (56.8%) հազ. դրամ գումար, տեղական վճարներ 2941.1 հազ. դրամ (73.5%):

2018 թվականի ընթացքում Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմը ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի բյուջեում կատարված փոփոխությունները: Համայնքի ղեկավարը վերահսկել է բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը:

Համայնքապետարան ՝

1.1 . Աշխատավարձ- 20172.9 հազ. դրամ գումար
1.2. Պարգևատրում - 1051.0 հազ. դրամ գումար
1.3. Էներգետիկ ծառ.- 830.5 հազ. դրամ գումար
1.4. Կապի ծառայություն – 174.0 հազ. դրամ գումար
1.5. Կոմունալ /խմելու ջուր/- 40.2 հազ. դրամ գումար
1.6. Համակարգչային ծառայություն- 163.2 հազ. դրամ գումար
1.7. Տեղեկատվական ծառայություն- 213.0 հազ. դրամ գումար

1.8. Ներկայացուցչական ծախսեր - հոդված՝ 4237 - 460.0 հազ.դրամ գումար,

1. –Վերջին դաս՝ 110.0 հազ. դրամ գումար
2. - մանկավարժների տոնին նվիրված միջոցառում ՝ 50.0 հազ. դրամ գումար
3.- Մարտի 8՝ 300.0 հազ.դրամ գումար

1.9. Ընդհանուր բնույթի ծառ.- հոդված՝ 4239՝- 200.0 հազ.դրամ գումար,

որից՝ 1. Մայիսի 9-ը՝ - 200.000 հազ. դրամ գումար

1.10. Ընթացիկ նորոգում - հոդված՝ 4251 - 35.0 հազ. դրամ գումար

որից՝

1.բաքսիի վերանորոգում -՝ 35.0 հազ. դրամ գումար

1.11. Գրասենյակային նյութեր- հոդված՝4261 - 343.1 հազ. դրամ գումար

1.12. Տրանսպորտային նյութեր- հոդված՝4264 - 850.0 հազ. դրամ գումար

1.13. Հատուկ նպատակային նյութեր – հոդված՝ 4269 -160.0 հազ. դրամ գումար

1.14.Վարչական սարքավորումներ – հոդված՝ 5122 – 145.0 հազ.դրամ գումար /տպիչի ձեռք բերում/

1.15.Պարտադիր վճար – հոդված՝ 4823 – 19.5 հազ. դրամ գումար

Ընդհանուր բնույթի հանրային ծառ. – *1546.0 հազ. դրամ գումար*

որից՝ հոդված 4237 - աման.նվերներ 907.4 հազ.դրամ գումար,

հոդված՝ 4239 - 638.6 հազ. դրամ գումար

որից՝ ծաղկեպսակ – 490.0 հազ. դրամ գումար

դիակառք- 148.6 հազ. դրամ գումար

. Ճանապարհների նորոգում- *1.390.0 հազ. դրամ գումար,*

հոդված 4239 դաշտամիջյան ճանապարհների հարթեցում- 250.0 հազ.դրամ գումար

հոդված 5113 – ասֆալտապատում - 990.0 հազ. դրամ գումար,

4. Աղբահանում- *1560.0 հազ. դրամ գումար*

5. Ջրամատակարարում- *1200.0 հազ.դրամ գումար*

որից՝ հոդված 4241- 100.000 հազ. դրամ գումար/ նախահաշվի կազմում/

հոդված 4657 - 1100.0 հազ. դրամ գումար/ խմելու ջրի կառուցման համաֆինանսավորում/

6. Փողոցների լուս. ընթացիկ նորոգում- *408.7 հազ.դրամ գումար*

որից՝ հոդված 4251 - 158.7 հազ. դրամ գումար /աշխատանք/

հոդված 4269 - 250.0 հազ.դրամ գումար, /նյութեր/

7.Հանգիստ մշակույթ և կրոն - *6599.4 հազ. դրամ գումար*

որից՝ հոդված 4111 - 6124.9 հազ. դրամ գումար/աշխատավարձ/

հոդված 4269 - 200.0 հազ.դրամ գումար,/երկու դռների տեղադրում/

հոդված 4212 - 174.5 հազ. դրամ գումար,/ հոսանք/

հոդված 4239- 100.0 դրամ գումար,/ մշակույթի տան տանիքի վերանորոգում/

8. Նախադպրոցական ուսուցում- *13500.0 հազ. դրամ գումար*

որից՝ հոդված 4511 - 13200.0 հազ.դրամ գումար/ սուբսիդիա/

հոդված 4237- 300.0 հազ.դրամ գումար որից՝ 200.0 հազ. դրամ - ավարտական խմբին նվերներ, 30.0 հազ. դրամ- աշնան հանդեսին նվերներ, 70.0 հազ. դրամ- տնօրենին հրաժեշտի միջոցառում.

9.Գյուղատնտեսություն՝ հոդված 4111 - *369.5 հազ.* դրամ գումար,/ անասնաբուժին աշխատավարձ/

10. Սոցանապահովներ- գումար *2240.0 հազ.դրամդրամ*

- Համայնքի հիմնախնդիրներ

ա. համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքամիջյան ճանապարհների նորոգումը,

բ. բնակավայրի (տնամերձների) ոռոգման ջրի համակարգի վերջնական կառուցումը՝ ներտնային համակարգի միացման աշխատանքները,

դ. վերանորոգման կարիք ունեն համայնքի մանկապարտեզը և մշակույթի տունը ,

ե. խիստ անհրաժեշտություն է դպրոցում սպորտդահլիճի կառուցումը:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/